ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆՔԱՂԱՔԻԱՋԱՓՆՅԱԿ ՎԱՐՉԱԿԱՆՇՐՋԱՆԻՂԵԿԱՎԱՐ

Ա. Սարգսյան5, (+374 11) 518-050, էլ. փոստ՝ ajapnyak@yerevan.am

№28/194868-24

«ԱՇԻՏԱ-ՇԻՆ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
ԿԱՄՈ ՏԵՐՅԱՆԻՆ
(ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Աբովյան, 3 մկրշ, 23շ., 2 բն.
էլ. հասցե՝ashteryan@gmail.com)

ԾԱՆՈՒՑՈՒՄ
/Պայմանագրիրը միակողմանի ամբողջությամբլուծելու մասին/

Համաձայն Երևանի քաղաքապետարանի /այսուհետ՝ Պատվիրատու/և «ԱՇԻՏԱ-ՇԻՆ» ՍՊԸ-ի /այսհուհետ՝ նաև Կապալառու/ միջև 20.09.2024թ. կնքված հ.ԵՔ-ԳՀԱՇՁԲ-24/166 պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ 1.1 կետի՝ Կապալառուն ստանձնել է Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Մարգարյան 23 շենքի բակի հիմնանորոգման աշխատանքների կատարումը՝ նշված աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 60-րդ օրացուցային օրվա ընթացքում: Համաձայն Պայմանագրի 1.2 կետ՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

Հաշվի առնելով, որ հ.ԵՔ-ԳՀԱՇՁԲ-24/166 ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ՝ նաև Գնման ընթացակարգ/ հրավերով, ինչպես նաև Պայմանագրով նախատեսված ծավալաթերթ-նախահաշվում ներառված հիմնանորոգման աշխատանքներն իրենց բնույթով ներառված չեն ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի հ.596-Ն որոշմամբ հաստատված Հավելված հ.4-ի «III.Բարեկարգման աշխատանքներ» բաժնի 8-րդ կետով սահմանված,ՀՀ օրենսդրությամբ սահմանված համապատասխան լիցենզիաներ չպահանջող աշխատանքների ցանկում, ուստի՝Կապալառու կազմակերպությունը պետք է ունենա ՀՀ օրենսդրությամբ

սահմանված համապատասխան լիցենզիաներ, ինչը պահանջվում է նաև Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Մարգարյան 23 շենքի բակի հիմնանորոգման աշխատանքների Աշխատանքային նախագծի 2-րդ կետով: Հիմնանորոգման աշխատանքները սկսելուց առաջ Աշխատանքային նախագիծը տրամադրվել է Կապալառուին՝ «ԱՇԻՏԱ-ՇԻՆ» ՍՊԸ-ին:

Միաժամանակ, հ.ԵՔ-ԳՀԱՇՁԲ-24/166 ծածկագրով գնման ընթացակարգին հայտ ներկայացնելով, «ԱՇԻՏԱ-ՇԻՆ»ՍՊԸ-ն գնանշման հարցումին մասնակցելու դիմում հայտարարությամբ հայտնել է, որ ցանկանում է մասնակցել հ.ԵՔ-ԳՀԱՇՁԲ-24/166 ծածկագրով հայտարարված գնանշման հարցման 1-ին չափաբաժնին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

Գնման ընթացակարգի շրջանակներում 20.08.2024թ. ՀՀ գնումների մասին օրենսդրությամբ սահմանված կարգով կատարված հարցմանը ի պատասխան տեղեկացվել է, որհրավերով սահմանված աշխատանքների կատարման համար պահանջվում է համապատասխան շինարարական լիցենզիա: Հրավերի պարզաբանման մասին հայտարարությունը և արձանագրությունը սահմանված կարգով հրապարակվել է ՀՀ Ֆինանսների նախարարության Գնումների համակարգում (հղում՝ https://gnumner.minfin.am/hy/search/):

2024 թվականի նոյեմբերի 11-ի հ.28/192279-24 գրությամբ Ձեզ առաջարկվել է մինչև 27.11.2024թ. «ՀՏ-Գրուպ» ՍՊԸ-ին և Աջափնյակ վարչական շրջանի աշխատակազմին ներկայացնել Մարգարյան 23 շենքի բակի հիմնանորոգման աշխատանքների Աշխատանքային նախագծով պահանջվող բոլոր լիցենզիաները և իրենց համապատասխան ներդիրները, կամ Լիցենզավորման գործընթացում գտնվելու փաստը հավաստող փաստաթղթերը, սակայն նշված փաստաթղթերը սահմանված ժամկետում չեն ներկայացվել Ձեր կողմից:

«Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա»ենթակետի համաձայն՝ **(...) մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթեխախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը,**:

Միաժամանակ՝ Պայմանագրի 8.3 կետի համաձայն՝ այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ

փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

«ԵՔ-ԳՀԱՇՁԲ-24/166» ծածկագրով գնման ընթացակարգերի հրավերի 1-ին մասի 8.14 կետի համաձայն՝ ***Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: (...)***

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պատվիրատուն միակողմանիամբողջությամբ լուծում է «ԱՇԻՏԱ-ՇԻՆ» ՍՊԸ-ի հետ 20.09.2024թ. կնքված հ.ԵՔ-ԳՀԱՇՁԲ-24/166պայմանագիրը՝ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի հ.526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ հոդվածի 17-րդ կետով սահմանված կարգով ծանուցելով այդ մասին:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Սույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը <u>հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում</u>: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում <u>որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում</u>, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման

հնարավորությունը չի վերացել: Մասնակիցը նշված ցուցակում ընդգրկվում է ներառվելու օրվան հաջորդող օրվանից երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից՝ տեղեկացնում եմ, որ Կապալառուի կողմից Պայմանագրի և որակավորման ապահովման գումարները Պատվիրատուի 900015211429 հաշվեհամարին Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետներում՝պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում վճարելու դեպքում Կապալառուն գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու մասին պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշումը **չի ներկայացվի լիազոր մարմնին:** Նված գումարների վճարումը պետք է իրականացվի լիազոր մարմնին որոշումը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը:

11/29/2024

X

ՍԵՐՈԲ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Signed by: SARGSYAN SEROB 2614900583 **ՍԵՐՈԲ ՍԱՐԳՍՅԱՆ**

Կատարող՝Տ. Սարգսյան, Ա. Պետրոսյան
Ֆինանսական բաժին
Հեռ.՝ 011-51-80-36
Էլ-փոստ՝finbajin@mail.ru